Հավելված 2
2024 թ. _փետրվարի 07 -ին
կնքված N ԴՏՊ-1141-11018/24 ՀԿԱՐԳ պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | Գավառի Փոքրիկ Իշխան ցերեկային խնամքի սոցիալական կենտրոն |
| **Դրամաշնորհի N** | ԴՏՊ-1141-11018/24 ՀԿԱՐԳ |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | Հայկական Կարիտաս բարեսիրական ՀԿ |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | Հունվար 2024թ. – Դեկտեմբեր 2024թ. |
| **Հաշվետու ժամանակահատված** | Հունվար 2024թ. – Դեկտեմբեր 2024թ. |
| **Ներկայացման օր** | Հունվար 10, 2024թ. |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Սոնա Խաչիկյան, Կենտրոնի համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում իրականացվել է երեխաների տվյալների հավաքագրում, կարիքի գնահատում և վերագնահատում:

Պարբերաբար թարմացվել է երեխաների տվյալների բազան և կենտրոն հաճախման գրաֆիկը հիմնված անհատական սոցիալական ծրագրերի հիման վրա:

Օրեկան կենտրոն է հաճախել **25-35** երեխա և մասնակցել են կենտրոնի կողմից իրականացվող ծառայություններին:

Կենտրոնում շահառուներին մատուցվել են հետևյալ ծառայությունները՝

- Սոցիալական
- Հոգեբանական
- Լոգոպեդի
- Սննդի տրամադրում/ ճաշ կենտրոնում
- Խմբավարի
- Անձնական օգնականի
- Խմբակ

Սոցիալ-հոգեբանական աշխատանք է իրականացվել շահառու երեխաների, ծնողների և նրանց ընտանիքի անդամների հետ:

Շահառու երեխաները կենտրոնում զբաղվում են տարաբնույթ քարտային ժամանցային և ինտելեկտուալ խաղերով, փազլներով, սպորտային սեղանի խաղերով ինչպիսիք են շախմատը, շաշկին, սեղանի թենիսը, բոուլինգը: Խաղերը նպաստում են երեխաների ուշադրության, երևակայության, ինտելեկտուալ և ստեղծագործական մտածողության, մտահորիզոնի զարգացմանը ձևավորմանը, նրանք դառնում են ինքնուրույն, կարողանում են միասնական որոշումներ կայացնել, համագործակցել: Այս ամենը նպաստում են նաև երեխաների ճկուն մտքի ձևավորմանը, բարձրացնում է ընդհանուր ինտելեկտը, զարգացնում շահառուների ճկունությունը, շարժումների կոորդինացիան: Խաղերը նպաստում են հայերեն լեզվի ճիշտ կիրառմանը, պահպանմանը, զարգացմանը առօրյա միջավայրում, զարգանում է նրանց լակոնիկ խոսքը:

Երեխաները ցերեկային կենտրոնում գտնվելու ժամանակահատվածում ապահովվում են ամենօրյա տաք սննդով, հիգիենիկ պարագաներով և գրենական պարագաներով:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են միջոցառումներ ըստ նախորոք մշակված աշխատանքային պլանի: Իրականացվել է տեղեկատվական հանդիպումներ ու միջոցառումներ ծրագրի շահառու երեխաների շրջանում նվիրված Երեխաների իրավունքների իրազեկման բարձրացմանը:

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

**1. Կյանքի դժվարին իրավիճակ ում հայտնված երեխաների գնահատված կարիքներ:**

2024թ.-ին տարեկան կտրվածքով ծառայություն է մատուցվել **123 երեխայի, որից՝ 62 տղա, 61 աղջիկ**

Ըստ **123** շահառուների շրջանում գնահատված կարիքների, կենտրոնի ԿԴԻՀ երեխաներն ու նրանց ընտանիքները, ովքեր ունեն սոցիալականացման և զարգացման ընթացքը խոչընդոտող զանազան հիմնախնդիրներ, մասնավորապես առանձնացվել են ըստ հետևյալ սոցիալական խմբերի՝

- ☐ *Միածնող ընտանիքի երեխաներ-* **12** /6 աղջիկ, 6տղա
- ☐ *Ոստիկանությունում հաշվառված, իրավախախտ երեխաներ-***1** /տղա
- ☐ *Սոցիալականացման դժվարություններ ունեցող երեխաներ-***5** /4աղջիկ 1 տղա
- ☐ *Վարքային դժվարություններ ունեցող երեխաներ-***3** /տղա
- ☐ *Անբարենպաստ, կոնֆլիկտային ընտանիքի երեխաներ-***1**/տղա
- ☐ *Սոցիալ-տնտեսապես անապահով ընտանիքի երեխաներ-***61**/ 33աղջիկ, 28 տղա
- ☐ *Արցախի հանրապետությունից բռնի տեղահանված ընտանիքի երեխաներ –*
- ☐ **20** / 10 աղջիկ, 10 տղա
- ☐ *Հաշմանդամություն և/կամ հատուկ կարիքներ ունեցող երեխաներ-***20** /5 աղջիկ, 15 տղա

- ☐ **Երեխաների տարիքային և սեռային բաժանում՝**
- ☐ 0 – 6 տարեկան- **9** երեխա՝ 7 տղա, 2 աղջիկ
- ☐ 7 – 14 տարեկան-**101** երեխա՝ 48 աղջիկ, 53 տղա
- ☐ 15 – 18 տարեկան- **13** երեխա՝ աղջիկ 10, տղա 3

☐ Հաշվետու ժամանակահատվածում Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում աշխատանք է իրականացվել 81 ընտանիքի հետ:

☐ Սոցիալ-հոգեբանական համալիր խորհրդատվություն է իրականացվել 92 ընտանիքի անդամների հետ, որից 81 մայր, 4 հայր, 6 տատիկ, 1 քույր:

**2. Անհատական սոցիալական ծրագրերով սահմանված և ամբողջությամբ իրականացված միջոցառումներ:**

ԱՍԾ-ներ են կազմվել կենտրոնի բազմամասնագիտական թիմի կողմից 123 երեխաներից յուրաքանչյուրի համար և դրանք իրականացվել են ըստ անհատական պլանավորման:

Իրականացված միրոցառումները մանրամասնորեն նկարագրվել են եռամսյա հաշվետվություններում:

**3.Կազմակերպության կողմից՝ ծառայություններ ստացած կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների առնվազն 90%-ի բավարարվածություն մատուցված ծառայություններից:**

Իրականացվել է հարցում շահառու ծնողների և երեխաների շրջանում: Հարցաթերթը կազմվել է կենտրոնի բազմամասնագիտական թիմի կողմից:

Հարցմանը մասնակցած ծնողների **98%-ը** բավարարված են կենտրոնի մատուցած ծառայություններից:

Հարցմանը մասնակցած երեխաների **100%-ը** բավարարված են կենտրոնում մատուցված ծառայություններից:

**4. Յուրաքանչյուր ամիս ծառայություններ ստացած կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ և նրանց ընտանիքներ՝ նվազագույնը տվյալ լոտում նշված շահառուների թվով:**

2024թ.-ին տարեկան կտրվածքով ծառայություն է մատուցվել 123 ԿԴԻՀ երեխայի:

Ըստ հաշվետու ամիսների շահառուների թիվը հետևյալն է՝

☐ *Հունվար- 85 երեխա*
☐ *Փետրվար-85 երեխա*
☐ *Մարտ-85 երեխա*
☐ *Ապրիլ- 85 երեխա*

- ☐ *Մայիս- 85 երեխա*
- ☐ *Հունիս- 90 երեխա*
- ☐ *Հուլիս -80 երեխա*
- ☐ *Օգոստոս-84 երեխա*
- ☐ *Սեպտեմբեր-95 երեխա*
- ☐ *Հոկտեմբեր-85 երեխա*
- ☐ *Նոյեմբեր-86 երեխա*
- ☐ *Դեկտեմբեր- 86 երեխա*

**5. Արտակենտրոն ծառայություններ ստացած կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների թիվ :**

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի կողմից չեն մատուցվել արտակենտրոն ծառայություններ, քանի որ կարիք չի առաջացել, բոլոր շահառուներին ծառայությունը մատուցվել է ցերեկային կենտրոնում:

**6. Երեխաների կրթական իրավունքի լիարժեք իրացման համար ստեղծված պայմաններ (արդյունքը չի ենթադրում դասապատրաստման իրականացում, այլ սոցիալական մանկավարժի կողմից՝ կրթությունից դուրս մնացած երեխաների՝ կրթական համակարգում ընգրկվածության հարցին աջակցություն):**

Կենտրոնի մասնագետների կողմից իրականացվել են դպրոցայցեր, մշտապես կապ է հաստատվել դպրոցի ուսուցիչների, դասղեկների, տնօրենների հետ՝ երեխաների կրթության վերաբերյալ, երեխաների ունեցած դժվարությունների կամ հաջողությունների հետ կապված:
Ըստ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի՝ համայնքում չկան կրթությունից դուրս մնացած տվյալներ և կենտրոնը ևս չի առնչվել նման դեպքի հաշվետու ժամանակահատվածում:

**7. Համայնքային մշակութային կյանքին ԿԴԻՀ երեխաների ընգրկվածության ապահովում:**

Հաշվետու 4 եռամսյակների համար ներկայացվել են շահառուների վերաբերյալ հաջողակ պատմություններ, որոնց միջոցով ներկայացվում է օրինակներ ԿԴԻՀ երեխաների համայնքային, մշակութային կյանքում ընդգրկվածության վերաբերյալ: Տարեկան կտրվածքով իրականացվել են հետևյալ գործողությունները արդյունքին հասնելու համար՝

- ☐ Ճանաչողական այց Գավառի ուսուցողական կենտրոն՝ 22 սաների, **որից 11 աղջիկ, 11 տղա մասնակցությամբ:**
- ☐ Ներառական-վիկտորինա՝ Համայնքային միջոցառում: **Հայկական Կարիտասի <<Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան**

**որակյալ կրթության կայացմանը>> ծրագրի շրջանակներում և Գավառի «Փոքրիկ Իշխան» սոցիալական կենտրոնի հետ համագործակցությամբ իրականացվել է խաղ-վիկտորինա ներառման, ներառական կրթության, բուլինգի, խտրականության, հասանելի միջավայրի վերաբերյալ: Խաղ-վիկտորինան տեղի է ունեցել Ռեստարտ Գավառ ԵՀԿ-ում: Խաղին մասնակցում էին Գավառի ՓԻ կենտրոնի սաները, Գավառի դպրոցներից աշակերտներ, Ռեստարտ Գավառ ԵԿՀ-ի ակտիվ երիտասարդներ: Վիկտորինային մասնակցել են** 14 ՓԻ կենտրոնի շահառու երեխաներ ՝9 աղջիկ, 5 տղա, 9 ակտիվ ակտիվ երիտասարդներ Գավառ համայնքից, որից 6 աղջիկ, 3 տղա, 5 աղջիկ՝ ծրագրի համագաղափարակիցներ, Հայկական Կարիտասի 6 աշխատակից:

- ☐ Համայնքային բարեկարգման աշխատանք: **Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 1 համայնքային աշխատանք Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասում գտնվող Սուրբ Հովհաննես մատուռի հարակից տարածքում: Համայնքային բարեկարգման աշխատքններին ներգրավվել են ընդհանուր թվով եղել** 73 մասնակից՝ 61 շահառու երեխա, 11 ծնող, 1 համայնքի անդամ:

- ☐ **Հայկական Կարիտասի Գավառի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնի հիմնադրման 14-ամյա տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառում:** Միջոցառումը համախմբել էր կենտրոնի 57 /33 աղջիկ, 24 տղա/ սաներին և նրանց 14 ծնողներին, 14 շրջանավարտներին, համայնքից հրավիրված 20 երեխաների ու երիտասարդների:

- ☐ **Եռօրյա ճամբարի մասնակցություն Թռչնագյուղում:** Հայկական Կարիտասի «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան, որակյալ կրթության կայացմանը» ծրագրի շրջանակում հուլիսի 10-12-ը Թռչնագյուղում իրականացվեց եռօրյա կրթական ճամբար՝ «Ներառականություն, կրթություն, նորարարություն» խորագրով: Ճամբարին մասնակցում էին շուրջ 80 երեխաներ ծրագրի գործընկեր 7 դպրոցներից և Հայկական Կարիտասի 4 Փոքրիկ Իշխան ցերեկային կենտրոններից: Գավառի Փոքրիկ Իշխան կենտրոնից ճամբարին մասնակցել են **4** երեխա, որից **2** տղա, **2** աղջիկ:

- ☐ **Ճանաչողական, Ուսումնական այց դեպի Երևան:** Ս/թ հուլիսի 21-ին կենտրոնի **22** սաների համար, որից **9 աղջիկ, 13** տղա իրականացվեց ճանաչողական, ուսումնական այց դեպի Երևան: Գավառի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնի սաները ճանաչողական այցի շրջանակներում այցելեցին Երևանի կենդանաբանական այգի՝ այգու կողմից իրականացվող սոցիալական պատասխանատվության շրջանակներում: Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնում երեխաները դիտեցին <<Չարլին և շոկոլադի գործարանը| արկածային հեքիաթ ներկայացումը: Ճանաչողական այցի մասնակիցները այցելեցին նաև Սուրբ Աստվածածին մատուռ:

- ☐ **Սերունդների երկխոսություն** միջոցառմանը ընդհանուր ներկա են գտնվել 46 մասնակից՝ 17 /5 **տղա, 12 աղջիկ**/ Փոքրիկ Իշխան կենտրոնի շահառու երեխաներ, 2/

տղա, 1 աղջիկ/ Փ Ի շրջանավարտ, Տնային խնամքի 14 շահառու և 1 կամավոր, Հայկական Կարիտասի 13 աշխատակից:

- **Ճանաչողական, Ուսումնական այց դեպի Ստեփանավան** կենտրոնի **22** սաների համար, որից **13** աղջիկ, **9** տղա ճանաչողական այցի շրջանակներում այցելեցին Ստեփանավանի Սոճուտ դենդրոպարկ, շրջեցին բուսաբանական այգու տարածքում առկա բնական անտառի ծառուղիներով, ծանոթացան զարդանախշերով բույսերին, ծառուղիներին, վայրի ծագում ունեցող բուսատեսակներին:Ստեփանավանի Լոռէ էքստրիմ պարկում երեխաները մասնակցեցին արշավային ծրագրերի, ներառյալ մագլցումներ, խաղեր:
  Ճանաչողական այցի մասնակիցները այցելեցին նաև Ստեփանավանի Սուրբ Սարգիս եկեղեցի:
- **Փառատոնի մասնակցություն Ալավերդիում:** Հայկական Կարիտասի «Արագ արձագանքում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ամենախոցելի ընտանիքներին» ծրագրի շրջանակներում Ալավերդի քաղաքում իրականցվել է սոցիալ-հոգեբանական միջոցառում՝ նվիրված Ընկերության Միջազգային Օրվան: Գավառի Փոքրիկ Իշխան կենտրոնից միջոցառմանը մասնակցել են կենտրոնից 11/3տղա, 8աղջիկ/ շահառու երեխա և 6 /մայր/ծնող: Փառատոնին մասնակցել են այն շահառուները, ովքեր տեղահանվել են Արցախից:
- **Մեկօրյա ճամբար Սևանա լճի ափին:** Գավառի «Փոքրիկ Իշխան» կենտրոնի սաների համար կազմակերպված Ամառային ճամբարը Սևանա Լճի ափին: Ճամբարին մասնակցել են **15 շահառու երեխա 8 աղջիկ, 7 տղա:**
- **Ամանորյա միջոցառում կենտրոնում,** որին մասնակցվել են **86** երեխաներ:
- **Խմբակներ:** Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի շահառուները ընդգրկվել են խմբակներին, որը ևս նպաստել է վերջիններիս համայնքային և մշակութային կյանքում ընդգրկվածությանը:
  Հաշվետու ժամանակահատվածում, ծրագրի շրջանակներում *պարի խմբակ են հաճախել 18 երեխաներ/ 1 տղա, 17 աղջիկ/; խոհարարության խմբակ են հաճախել 12 երեխաներ/7 տղա, 5 աղջիկ/, անգլերենի խումբ են հաճախել 12 երեխաներ/ 8 աղջիկ, 4 տղա/:*

**8. Շահառուների առնվազն 90% ծնողների ընդգրկվածությամբ՝ կարիքահեն դասընթացներ /ծնողավարման հմտություններ, ֆինանսական միջոցների տնօրինում և այլն/:**

Հաշվետու ժամանակահատվածում 80% (65-ը 81-ից) ծնողների մասնակցել են ծնողավարման հմտությունները զարգացմանը ուղղված դասընթացերին:
Ծրագրի շահառու **90%** ծնողները մասնակցել են նաև հետևյալ դասընթացներին՝
- Ներառական կրթություն-**31** ծնող
- Անվտանգության քաղաքականություն-**23** ծնող
- Բռնության տեսակների կանխագելում, պաշտպանողական քաղաքականություն-**45** ծնող

- ☐ Միգրացիա -10 ծնող
- ☐ Իրազեկման հանդիպումներ կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ- 81 ծնող
- ☐ Մայրերի ինքնաօգնության խմբի հանդիպումներ- 11 ծնող

**9. Ցերեկային խնամքի ծառայություններում ընդգրկված հաշմանդամություն ունեցող երեխաներ:**

Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային խնամքի ծառայություններում ընդգրկված է եղել 1 հաշմանդամություն ունեցող երեխա:
Ցերեկային խնամքի ծառայություններում ընդգրկված են եղել **31** երեխա, ովքեր ունեն հատուկ կարիքներ, ինչպիսիք են՝

- ☐ *Սելեկտիվ մուտիզմ, գերզգայունություն -1 երեխա / աղջիկ/*
- ☐ *Ինտելեկտուալ հապաղում, մանկական պարիզի էնցեֆալոպաթիա, վարքային խանգարում-1 երեխա /տղա/*
- ☐ *Լեզվական խնդիրներ -14 երեխա /10 տղա, 4 աղջիկ/*
- ☐ *Դարբերական հիվանդություն – 3 երեխա /1 աղջիկ, 2 տղա/*
- ☐ *Քրոնիկ գաստրիտ-1 երեխա /աղջիկ/*
- ☐ *Հեռատեսություն -1 երեխա /1 տղա/*
- ☐ *Հիպերմետրոպիա, համագործակցվող շլություն-1 երեխա/աղջիկ/*
- ☐ *Անբավարար փարթամություն-1 երեխա/տղա/*
- ☐ *Թեթև մտավոր հետամնացություն-3 երեխա/տղա*
- ☐ *Հոգեխոսքային զարգացման հապաղում, աուտիստիկ սիմպտոմատիկայով- 3 երեխա/ 2 տղա, 1 աղջիկ*
- ☐ *Չափավոր մտավոր հետամնացություն, անբավարար ֆիզիկական զարգացում:-1 տղա*

**10. Ծառայություններից օգտվող վարքային խնդիրներ ունեցող երեխաներ,**

Ծառայություններից օգտվող վարքային խնդիրներ ունեցող երեխաների թիվը հաշվետու ժամանակահատվածում 5 (տղա) է:
Վարքային խնդիրներ ունեցող բոլոր երեխաները հաշվետու ժամանակահատվածում ներգրավված են եղել կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններում:

**11.Ծառայություններում ընդգրկված վարքային խնդիրներ ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար ներդրված առանձին բաղադրիչ:**

Ներառականության սկզբունքով և ինդեքսի համապատասխան ծառայություններում ընդգրկված վարքային խնդիրներ ունեցող երեխաների և նրանց ծնողները մասնակցել են կենտրոնի կողմից իրականացվող բոլոր միջոցառումներին: Անհատական մեթոդներով նրանց հետ աշխատել են նեղ ոլորտի

մասնագետները՝ լոգոպեդ, հոգեբան, սոցիալական աշխատող, անձնական օգնական:
Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական և հոգեբանական ծառայություն է մատուցվել 123 երեխաների և նրանց ընտանիքի անդամներին, 12 երեխաներ օգտվել են անձնական օգնականի ծառայությունից, 21 երեխաներ օգտվել են լոգոպեդի ծառայությունից:

**12. Անձնական օգնականի աջակցությունից օգտվող երեխաներ:**

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի շահառու 12 երեխաները, որից 10 տղա, 2 աղջիկ, օգտվել են անձնական օգնականի ծառայությունից: Վերջիններս ունեցել են հետևյալ խնդիրները՝

- ☐ *Ինտելեկտուալ հապաղում*
- ☐ *Վարքային խանգարում*
- ☐ *Աուտիզմ*
- ☐ *Հոգեխոսքային զարգացման հապաղում*

**13. Տրամադրված ծառայությունների արդյունքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների վիճակի մեղմում (առնվազն 60% շահառուների դեպքում) և դժվարին իրավիճակի ամբողջական հաղթահարում (առնվազն 40% շահառուների դեպքում):**

Իրականացվել է հարցում կենտրոնի շահառու ծնողների շրջանում: Հարցաթերթիկը կազմվել է կենտրոնի բազմամասնագիտական թիմի կողմից:
Հարցմանը մասնակցած ծնողների 42%-ը նշել է, որ կենտրոնում մատուցված ծառայություններից օգտվելու արդյունքում տեղի է ունեցել նրանց ընտանիքների դժվարին իրավիճակի մեղմում, իսկ 58%-ը նշել է, որ տեղի է ունեցել դժվարին իրավիճակի ամբողջական հաղթահարում:

**14. Ծառայությունում ընդգրկված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների անհատական սոցիալական ծրագիր:**

Տարեկան կտրվածքով 123 ԿԴԻՀ երեխաների համար կազմվել են ԱՍԾ-ներ:

**15. Ծառայության արդյունքում ընտանիքների հետ վերամիավորված երեխաների թիվ:**

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի սոցիալական աշխատողները և հոգեբանը խորհրդատվությունների միջոցով նպաստել են 2 ընտանիքներում ծնողավարման հմտությունների զարգացմանը և նպաստել է, որ երեխաները շարունակեն ապրել ընտանիքներում, քանի որ ծնողները միտք են ունեցել երեխաներին մանկատուն տանել:

**16. Ծառայություններ ստացած կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ, որոնց ծնողները (կամ միակ ծնողը կամ օրինական այլ ներկայացուցիչը) դիմել են երեխային հաստատություն տեղավորելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի սոցիալական աշխատողները և հոգեբանը խորհրդատվությունների միջոցով նպաստել են 2 ընտանիքներում ծնողավարման հմտությունների զարգացմանը, քանի որ վերջիններիս ծնողները միտք են ունեցել երեխաներին մանկատուն տանել:
Դեռևս վերջիններս չեն դիմել հաստատություն երեխաներին տեղավորման համար:

**17. Ծառայություններ ստացած երեխաներ (ներառյալ նրանց ընտանիքները), ովքեր հաստատությունից վերամիավորվել են ընտանիքների հետ և անհատական սոցիալական ծրագրի մոնիթորինգի արդյունքների համաձայն կարիք ունեն ստանալու սոցիալ-հոգեբանական, սոցիալ-վերականգնողական ծառայություններ:**

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը չի ունեցել նման դեպք:

**18. Ներկայացված հաշվետվություններ, հիմնավորող փաստաթղթեր և տեղեկատվական համակարգում իրականացված մուտքագրումներ:**

Հաշվետու ժամանակահատվածում ըստ դրամաշնորհի պայմանագրի պահանջի ներկայացվել են եռամսյակային հաշվետվությունները, ամսեկան կատարողականները՝ ըստ շահառուների ստացած ծառայությունների և ժամաքանակի:
Մանուկ ՏՀ-ում կատարվել են համապատասխան մուտքագրումները:

**<u>19. Դասընթաց / վերապատրաստում/Սեմինար աշխատակիցների համար</u>**

Հաշվետու շրջանում իրականացվել է մի շարք սեմինարներ, դասընթացներ, վերապատրաստումներ աշխատակիցների համար Ծրագրի և այլ կառույցների կողմից:

- ☐ Մ/թ փետրվարի 20-ին կենտրոնի սոցիալական աշխատողները, հոգեբանը և համակարգողը մասնակցել են <<Ներառականությունը սկսվում է ինձանից>> թեմայով դասընթացին, որը իրականացվել է Հայկական Կարիտասի <<Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան որակյալ կրթության կայացմանը>> ծրագրի շրջանակներում: Վերապատրաստման դասընթացի արդյունքում թեմատիկ դասընթացը իրականացվել է նաև կենտրոնի շահառու երեխաների շրջանում:
- ☐ Մ/թ մարտի 28-ին կենտրոնի համակարգողը և սոցիալական աշխատողը մասնակցել են ՀՀ 2024 թ. երիտասարդական մայրաքաղաք Գավառում պաշտոնական միջոցառմանը:

- ☐ Հունիսի 26-27-ին կենտրոնի մասնագիտական թիմը մասնակցել է §Շրջակա միջավայրի պահպանում¦ թեմայով դասընթացին, որը իրականացվել է Հայկական Կարիտասի §Փոքրիկ Բնապահպաններ¦ ծրագրի շրջանակներում:
- ☐ Հունիսի 19-ին կենտրոնի համակարգողը և սոցիալական աշխատողը մասնակցել են Գավառի Գյուղատնտեսական քոլեջում կազմակերպված Քանավեճին՝ որպես ժյուրիի անդամներ: Միջոցառումը իրականացվել է §Սևանա լճի պահպանման հարցակ¦ ծրագրի շրջանակներում:
- ☐ Մայիսի 31-ին կենտրոնի սոցիալական աշխատողները մասնակցել են «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի «Աշակերտական խորհուրդների կարողությունների զարգացում» ծրագրի ամփոփիչ հաշվետու միջոցառմանը, որը իրականացվել է Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում:
- ☐ Մայիսի 30-ին կենտրոնի համակարգողը մասնակցել է §Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության EcoSE՝ «Սոցիալ-տնտեսական էկոհամակարգի զարգացում Ճամբարակ միավորված համայնքում» ծրագրի շրջանակում Ճամբարակ համայնքի Մարտունի բնակավայրում գտնվող «Բնության կենտրոն»-ում տեղի ունեցավ «Տեղական սոցիալական փոփոխության անիմացիա»-ի երկրորդ աշխատարանին:
- ☐ Մայիսի 16-ին կենտրոնի սոցիալական աշխատողները մասնակցել են «Ուսումնառության համընդհանուր ձևավորում. Ճարտարապետությունից անցում դեպի կրթություն» թեմայով դասընթացին, որը վարել է Արմենուհի Ավագյանը: Դասընթացը իրականացվել է Հայկական Կարիտասի «Նպաստել Հայաստանում՝ բոլորի համար, ներառական, համապատասխան և որակյալ կրթության կայացմանը» ծրագրի շրջանակներում:
- ☐ Մայիսի 10-ին կենտրոնի լոգոպեդը մասնակցել է §Խոսքի զարգացում¦ թեմայով թեմատիկ բաց դասին Գավառի Ս. Քոչարյանցի անվան թիվ 1 հիմնական դպրոցում:
- ☐ Ապրիլի 29-ին կենտրոնի սոցիալական աշխատողը մասնակցել է Գավառի համայնքապետարանում ծավալված §Երիտասարդական էքսպո 2024¦ միջոցառման քննարկմանը:
- ☐ Ապրիլի 16-ին կենտրոնի անձնակազմը, թվով 8 մասնակից (սոցիալական աշխատողներ, հոգեբան, լոգոպեդ, համակարգող, խոհարար,տնտեսուհի) մասնակցել են §Ոչ հարմարվողական վարքերի ձևավորման հիմնական գործոնները և շտկողական աշխատանքների հիմնական ուղղությունները¦ թեմայով դասընթացին, որը վարել է փորձագետ Հայկանուշ Դիլանյանը: Դասընթացը իրականացվել է Հայկական Կարիտասի §Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապարփակ որակյալ կրթության կայացմանը¦ ծրագրի շրջանակներում:
- ☐ Ապրիլի 5-ին երեխայի մայրը Փոքրիկ Իշխան կենտրոնի մասնագիտական թիմը մասնակցել է <<Ինչ է ներառական կրթությունը>> թեմայով դասընթացին, որը իրականացվել է Հայկական Կարիտասի <<Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապարփակ որակյալ կրթության կայացմանը ծրագրի շրջանակներում:
- ☐ Ս/թ. ապրիլի 2-3-ը «Հայկական Կարիտաս»-ի «Փոքրիկ բնապահպանները» ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ «Շրջակա միջավայրի պահպանության և բնապահպանական կրթության հիմունքներ» թեմայով դասընթաց, որը նախատեսված էր կազմակերպության աշխատակիցների համար: Դասընթացին մասնակցել է ծրագրի ղեկավարը և կենտրոնի համակարգողը:

- ☐ Օգոստոսի 29-սեպտեմբերի 2-ը կենտրոնի համակարգողը Հունաստանում մասնակցել է Կարիտաս Եվրոպայի <<Հույսի կառուցում' սրտերը կամրջելով. Կարիտասի Երիտասարդ կամավորների արժեքները գործնականում>> ֆորումին:

- ☐ /թ դեկտեմբերի 13-ին կենտրոնի համակարգողը և սոցիալական աշխատողները մասնակցել են <<Կրթական ոլորտի պատասխանատուների, դասավանդող մասնագետների և հասցեատերերի փոխադարձ ակնկալիքները>> թեմայով քննարկմանը, որը իրականացվել է Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Գեղարքունիքի մասնաճյուղի կողմից:
- ☐ Ս/թ նոյեմբերի 22-ին, կենտրոնի սոցիալական աշխատողները մասնակցել են "Ավելին, քան մեկ պատմություն" թիմակառույց խաղ-գործիքի ներկայացմանը, որը իրականացվել է "Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն" ՀԿ-ի կողմից Գավառի Ռեսքարթ Երիտասարդական կենտրոնում: Թիմակառույց խաղ-գործիքը նաև տրամադրվել է կենտրոնին: Խաղի մասին տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ More than one story/Ավելին, **քան մեկ պատմություն - YCCD**
- ☐ Ս/թ նոյեմբերի 12-15-ը կենտրոնի համակարգողը մասնակցել է <<Պաշտպանողական վարքագիծ>> թեմայով վերապատրաստմանը, որը իրականացվել է Հայկական Կարիտասի կողմից:
- ☐ Ս/թ նոյեմբերի 7-ին կենտրոնի սոցիալական աշխատողները մասնակցել են Հայկական Կարտիասի կողմից մշակվող <<Ծնողավարման մոդուլի>> քննարկմանը:
- ☐ Ս/թ նոյեմբերի 1-ին Հայկական Կարիտասի Գավառի ՓԻ կենտրոնի և «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան, որակյալ կրթության կայացմանը» ծրագրի բազմամասնագիտական թիմերը համատեղ քննարկում ունեցան ներառական բնույթի համայնքային միջոցառման իրականացման համար:
- ☐ Ս/թ հոկտեմբերի 2-ին Գավառի ուսուցողական կենտրոնում հյուրընկալվել է Նարեկ Դուրյանը: Հանդիպմանը մասնակցել է կենտրոնի սոցիալական աշխատող Տ. Դարաղյանը:
- ☐ Ս/թ հոկտոմբերի 2-3-ը կենտրոնի համակարգողը մասնակցել է «Սոցիալական համերաշխության տնտեսություն և համայնքի ներգրավում» թեմայով երկօրյա աշխատարանին, որը կազմակերպվել էր «Հայկական Կարիտաս»-ի «Սոցիալական տնտեսության հզորացում» ծրագրի շրջանակում:
- ☐ Ս/թ հոկտոմբերի 16-ին կենտրոնի թիմը /համակարգող, սոցիալական աշխատողներ, հոգեբան, լոգոպեդ, տնտեսուհի, խոհարար/ մասնակցել են << Հաշմանդամության տեսակները>> թեմայով դասընթացին, որը կազմակերպվել է Հայկական Կարիտասի «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան, որակյալ կրթության կայացմանը» ծրագրի շրջանակներում:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացը՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

**Սոցիալ-հոգեբանական և լոգոպեդական անհատական և խմբային աշխատանքների** արդյունքում բարելավվել են ընտանեկան և հասակակիցների միջև միջանձնային փոխհարաբերությունները, երեխաները դարձել են ավելի ինքնուրույն, հեշտությամբ են ինքնարտահայտվում, հետևում են անձնական հիգիենային, կարևորում են կրթությունը, առողջ ապրելակերպը, հասակակիցների հետ ավելի հեշտությամբ են շփվում /բարելավվել են շփման հմտությունները/, ծնողները վերանայել են իրենց ծնողավարման հմտությունները, գիտակցում են իրենց կարևորությունը սեփական երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում, որոշ շահառուները ձեռք են բերել մասնագիտական հմտություններ ևս:
**Միջոցառումները** խթանել են երեխաների և ծնողների ազատ արտահայտումը, շփումը և հաղորդակցումը, ինչպես նաև նպաստել են նրանց գիտելիքների զարգացմանը բռնության տեսակների, միջմշակութային երկխոսության, երեխաների իրավունքների, հայկական մշակույթի և հոգեկան առողջության խնդիրների մասին: Համագործակցային գործունեությունը լայնացրել է երեխաների աշխարհայացքը, նպաստել է նրանց ազատ շփմանը հասակակիցների, անծանոթների և մասնագետների հետ, ինչպես նաև զարգացել է ծնող-երեխա առողջ երկխոսությունը:
**Կյանքի հմտությունների դասընթացը** երեխաներին փոխանցել է գիտելիքներ և նպաստել է երեխաների վերլուծական մտածելակերպի և ինքնագնահատականի բարձրացմանը:
**Անգլերենի լեզվի ուսուցումը** նպաստել է երեխաների խոսակցական հմտությունների բարելավմանը, ովքեր ցանկանում են խորացնել լեզուն և խոսել այդ լեզվով:
**Համայնքային նախաձեռնության** արդյունքում երեխաները ձեռք են բերել մի շարք կարևոր հմտություններ և գիտելիքներ: Նրանք սովորել են թիմային աշխատանք, արդյունավետ որոշումների կայացում և ռեսուրսների հավաքագրում՝ կենտրոնի տարածքի մաքրում և համայնքային գործունեություն իրականացնելու ընթացքում: Դասընթացներից հետո երեխաները խթանվել են սոցիալական պատասխանատվություն դրսևորելու և համայնքային խնդիրներին լուծումներ առաջարկելու: Նրանք նաև զարգացրել են պլանավորման և գործնական հմտություններ՝ մանկապարտեզում կազմակերպելով զարգացնող խաղեր: Այս նախաձեռնությունը ոչ միայն նպաստել է երեխաների պատասխանատվության զգացողության և թիմային աշխատանքի զարգացմանը, այլև խթանել է նրանց ակտիվ մասնակցությունը համայնքային կյանքի մեջ՝ համագործակցելով Կենտրոնի և համայնքի բնակիչների հետ:
**Դրական ծնողավարման և հզորացման դասընթացները** բարելավվել են ծնողավարման հմտությունները, ծնողները դարձել են ավելի զգայուն, ավելի ներգրավված են երեխաներին

վերաբերող հարցերում, արձագանքում են կարիքներին և հետևողական են կրթական, առողջապահական հարցերին: Ձեռք են բերել ծնողավարման, երեխայի տարիքային առանձնահատկությունների, խնամքի և վարքի վերաբերյալ գիտելիքներ: Նաև աուտիզմով և մտավոր խնդիրներով երեխաների հետ աշխատելու համար: Նրանք նաև սովորել են հոգ տանել իրենց բարեկեցության մասին և խնամքի դժվարությունները քննարկել միմյանց հետ: Ինքնաջակցման խմբում ծնողները զբաղվել են փոխօգնությամբ և քննարկել են երեխաների հոգեկան խնդիրները, ինչպես նաև նրանց տեխնոլոգիաներից կախվածությունը: Դասընթացները օգնել են ծնողներին ամրապնդել սոցիալական կապերը և համագործակցել իրենց երեխաների հետ: Տեսական և գործնական գիտելիքների շնորհիվ ծնողները ավելի վստահ են իրենց երեխայի կարիքները հասկանալու և աջակցելու գործում:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

- Ջինիշյան հիշատակի հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում Գավառի դպրոցների Ահս անդամներն ու մենթորներ/փոխմենթորների հանդիպումը «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի Գավառի «Փոքրիկ Իշխան» սոցիալական կենտրոնում: https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0QgvrU4RRYXNGjT2nJBdo4kD...1P...6Ye6 128YcEX7l&id=1000...401256

- Սբ. Հարության տոնի առթիվ կազմակերպված միջոցառման նկարներ՝ Հայկական Կարիտասի Փոքրիկ Իշխան ու Սաքինե կենտրոններում https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0tZQ9MrFgLzXKBTgj7P5...DBtCr7D...E4b ZWZAqAJ1iLdUEr...X!

- Խաղ «Ներառական վիկտորինա» https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0GvDBHbSLnYJv6aShvhX3TcK3hBuzPdA2 BrHhyCJhamWPQtyIt8FRJgBPCjqPHz6Ml

- Գավառի «Փոքրիկ իշխան» կենտրոնում գործող Սոցիալական հմտությունների զարգացում խմբի շրջանակներում կենտրոնի սաների այցը Գավառի Ուսուցողական կենտրոն՝ https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02iMJEJkZ3f22gVSEB9me3iCEHnizEEjH56z wtffKM7cgk2LWmzZfFc9P52LztW4kxl

- Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր, հունիսի 1-ի միջոցառում՝ https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0raymp6GRP5hpiQsmqyksRxvizboYSUUFc WuNSufeRg7uoGB2wayAWWH1bddxLdjSl

- Վերապատումներ անձնակազմի համար՝ https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02RJcbRe...wdrWWYNEhSbU...6hXby...RbgBR...l

  https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0mqmeabyTj9MHa37qbhToWfqRuKWvrb2 r4uLiSokCy5DGIUtxxNFBLnkyw8hWmF51l

- Հայկական Կարիտասի Գավառի «Փոքրիկ Իշխան» կենտրոնի սոցիալական աշխատողները համագործակցելով «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի հետ՝ «Աշակերտների փափուկ հմտությունների զարգացում» ենթանախագծի շրջանակներում իրականացրել են դասընթացներ: Աշակերտական խորհուրդի հետ ունեցած հանդիպումները առավել մանրամասն ներկայացված են հետևյալ հղումներով՝
  https://www.facebook.com/profile.php?id=61554300087488

  https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid029tVUPb6qYoEyKqiWUF2QuQsbsf6ekhv9G2zX1Gb6UZAIQj9NrLhhMWA89QacDXbDl

  - «Արդյունավետ հաղորդակցություն» թեմայով քանախոսություն՝
    https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0MdGA4bsXjr1qGLgFPG9NCgwwM9hFjwyqeF23zq3msS6VBoU1jEKbtnHQwRydbiZYl&id=100094690401356
  - «Քննադատական մտածողություն» թեմայով քանախոսություն՝
    https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0zeVG9fDsGek3zse7FQn1BunYWdjf34uiSB5K13FNcpwsxDRzbv8WqKrHlbpjstvql&id=100094690401356
  - «Մասնագիտական կողմնորոշում»_թեմայով քանախոսություն՝
    https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02h8qGbdHg14UCkYylhCAbiZt8ejMSft8b7A7q75dRahk8z6wWfGGJfkWtxDaYhZZCl&id=100094690401356

    https://www.facebook.com/100063713941385/posts/957323333068123/?mibextid=WC7FNe&rdid=uGc5tjF5chFaEC9

- Փի Կենտրոնի ուղղորդմամբ կենտրոնի 10 երեխաներ մասնակցել են «Ինքնապաշտպանություն աստանդական շներից» իրազեկման դասընթացին, որը իրականացվել է Գավառի Հովի. Թումանյանի անվան N3 հիմնական դպրոցի Ախ կազմի նախաձեռնությամբ, <<Ջինիշյան>> հիշատակի հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում: Լուսանկարները հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0RuYRwftenF7pja4rTPvnsHEgX3Dwoj1ExYwUUZRqNqa3wTKtWyGTY9rZJGceDZScl&id=100094690401356

## Իրավունքների իրազեկման արշավի վերաբերյալ լուսաբանումներ

- Իրազեկման Ակցիա 1; Ակցիա 2, Ակցիա 3-ի մասին տեղեկատվական նյութը հասանել է Հայկական Կարիտասի ֆեյսբուքյան հարթակում, հետևյալ հղմամբ՝ https://fb.watch/sjWg2T7z4F/
- Իրազեկման Ակցիա 4-ի մասին տեղեկատվական նյութը հասանել է Հայկական Կարիտասի ֆեյսբուքյան հարթակում, հետևյալ հղմամբ՝ https://fb.watch/sjZnbQE_Ud/
- Իրազեկման Ակցիա 5-ի մասին տեղեկատվական նյութը հասանել է Հայկական Կարիտասի ֆեյսբուքյան հարթակում, հետևյալ հղմամբ՝ https://fb.watch/sj_aHrzjrH/
- Իրազեկման Ակցիա 6-ի մասին տեղեկատվական նյութը հասանել է Հայկական Կարիտասի ֆեյսբուքյան հարթակում, հետևյալ հղմամբ՝ https://fb.watch/sj_lWglsTO/
- Իրազեկման Ակցիա 7-ի մասին տեղեկատվական նյութը հասանել է Հայկական Կարիտասի ֆեյսբուքյան հարթակում, հետևյալ հղմամբ՝ https://fb.watch/sk8xQj9hvX/
- Իրազեկման Ակցիա 9; Ակցիա 10-ի մասին տեղեկատվական նյութը հասանել է Հայկական Կարիտասի ֆեյսբուքյան հարթակում, հետևյալ հղմամբ՝
  https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0bmMrNKpMgzbu3gqTKTv1gAgbKRbqGnZzxNNY1PR8tYYFFBCBqEyWb6satuZvYfl
- Երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված արշավի ամփոփիչ միջոցառման մասին տեղեկատվական նյութը հասանելի է հետևյալ հղմամբ՝
  https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02YXsHfLa8LsedhpaMghYEzpw9TkMBoFxPLz7otwBaEU22GgsC3faWX2Gl4g2bfq4l

- Գավառի Մ. Բոռնիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոցի ԱԽ կազմի կողմից «Աշակերտների իրավունքների պաշտպանություն» ենթանախագծի շրջանակներում նկարահանված «Սովորողի իրավունքներ և պարտականություններ» խորագրով տեսահոլովակի պատրաստմանը մասնակցել են կենտրոնի և նույն դպրոցում սովորող երեք սաներ: Տեսանյութը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/watch/?v=974481317537711&rdid=rZq65DqQrmoDTENY
- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների շրջանակներում <<Հայկական կարիտաս>> բարեգործական ՀԿ-ի Գավառի <<Փոքրիկ Իշխան>> սոցիալական խնամքի ցերեկային կենտրոնի կողմից իրականացված երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացմանն ուղղված արշավի վերաբերյալ անդրադարձ է կատարվել Գավառ ՀԸ և ՀԻ-ի եթերով:
https://www.1lurer.am/hy/2024/05/30/%D4%B5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-
%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-
%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AB%D6%80%D5%A1%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B4%D5%A1%D5%B6-
%D5%A1%D6%80%D5%B7%D5%A1%D5%BE%D5%9D-
%D4%B3%D5%A1%D5%BE%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D5%B4/1133304

- Ս/թ հոկտեմբերի 2-ին Հայկական Կարիտասի Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում տեղի <<**Ոչ Բռնությանը**>> խորագրով ամփոփիչ թեմատիկ հանդիպում ծրագրի համագործակից կառույցների շահառու ծնողների և կենտրոնի բազմամասնագիտական թիմի մասնակցությամբ:
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid031Vq6FzQ715VLOeHRdjgCXsLWTQBgAtGl45ayzMeSQ3E3JZiaWgx6WEEuPMRXFYl

- **«Ոչ բռնությանը»** քարոզարշավի շրջանակներում իրազեկող և կանխարգելիչ հանդիպումներ, միջոցառումներ ծրագրի շահառու երեխաների և ծնողների շրջանում
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0ihtjGQjYCCNtqknQEzMQNqAwvFBeVoxd5hDHopENeEAmEGkqmfRrBw4kwYZ6wKKil

- Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնի կողմից իրականացվող **Ոչ բռնությանը միջազգային օրվան նվիրված** իրազեկող և կանխարգելիչ արշավի շրջանակներում նկարահանված տեսանյութ՝ կենտրոնի սաների մասնակցությամբ՝
https://www.facebook.com/ArmenianCaritas/videos/1072034091158646

- Համայնքային բարեկարգման աշխատանքներ կենտրոնի շահառուների ակտիվ ներգրավվածությամբ՝
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02xtEo6TK7KA3oA7AomCyzKGMWHGeoxoHjdqDYXxYU5PNEUccvVZHJhL7uT79daJ7kl

- Բաց-դռների արշավ: Պարի խմբակի միջոցառում
https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02STBemheVAbbjYCNdBXJg9DdsDUk8p2b59bmSqCghSG5javZLxiCLxhwid9aFwXAWl&id=100067178295375

- Ծնողավարման հմտությունների զարգացմանը ուղղված դասընթացներ՝
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0UnGadgikMqsm5iYHwpX9wGQTznb8HXN5FEbAWyeoFrTM68iTVEPjN9FvNjxcVhcxl

- Հայկական Կարիտասի Գավառի <<Փոքրիկ Իշխան >> սոցիալական կենտրոնի և Գավառի Տնային խնամք Միայնակ տարեցներին ծրագրի շահառուներին համախմբել էր Սերունդների երկխոսություն խորագիրը կրող միջոցառում:
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0EDdDXxmfKb2rUHjeiMbWZLcEjGld7gMDhUCjxBAAdzRWfjKeJgwDj8KfhEL1xkF5l

https://www.facebook.com/ArmenianCaritas/videos/410327361536609

- Ս/թ Օգոստոսի 9-ին Ճամբար Սևանա լճի ափին https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02zt674VTrVe5TiA5eprG45DT6UHajwf84VCBqCkX64Ce5RzPWtwZkZnHV8SGPhMWLl

- Ս/թ հուլիսի 30-ին Ալավերդի քաղաքում մասնակցություն սոցիալ-հոգեբանական փառատոնին՝ նվիրված Ընկերության միջազգային օրվան: https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0k172eUDjWuua7ikgjaPMT2k4jtYwkwSWM1kh5CZyw49deNBQ7HTjKroSvX37aVrl&id=61554412805793

  https://www.facebook.com/ArmenianCaritas/videos/528560599526733

- Ս/թ հուլիսի 26-ին Գավառի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնի սաների համար կազմակերպված ճանաչողական այցի դեպի Ստեփանավանի Սոճուտ դենդրոպարկ, Ստեփանավանի Լոռէ էքստրիմ պարկում և Սուրբ Սարգիս եկեղեցի: https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0beeUnVeeutmgis429N91fgZeJRLYwf6pgTjjUbN2jnn4fnR56ZxeGGkRLCLbeFLCl

- Հուլիսի 21-ին Գավառի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնի սաների համար կազմակերպված ճանաչողական այցը դեպի Երևանի կենդանաբանական այգի, Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոն և Սուրբ Աստվածածին մատուռ: https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid027X9p7jeXrFy7PbWMj3gtBnZmrR8UGWufgo176hR9YKsnndorsdxsCT3BhoqABy5bl

- Հուլիսի 10-12-ը Ծովագյուղում իրականացված եռօրյա կրթական ճամբար՝ «Ներառականություն, կրթություն, նորարարություն» խորագրով՝ **https://www.facebook.com/ArmenianCaritas/videos/512233624708512**
- Գավառի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնի հիմնադրման 14-ամյա տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառում՝ https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0ZNAmMNCd3cFRrYMdfZ9kaiWaE1CxZUzsUBwUnhtLf4ca1UEeUIhxyw4AjcneTMwol
- Գավառի Փոքրիկ Իշխան կենտրոնի հիմնադրման 14-ամյա տարեդարձին նվիրված միջոցառման լուսաբանում Հ1-ի կողմից և Հայկական Կարիտասի ֆեյսբուքյան էջում https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0ZNAmMNCd3cFRrYMdfZ9kaiWaE1CxZUzsUBwUnhtLf4ca1UEeUIhxyw4AjcneTMwol

https://www.facebook.com/watch/?mibextid=Le6z7H&v=1261342565226285&rdid=iG8DS2mOoNL5rXfw

☐ Հաշվետու ժամանակահատվածում խորհրդատուներ չեն գրանցվել:

Անձնակազմի մասնակցություն դասընթացների, վերապատրաստումների՝ https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02mDV5cc4YPSgiiwXTQ5zxdKVrRqNDexjW5V7tjocpb7UvNrBV3w4gihvjhG13GAl

https://www.facebook.com/kyavartvcompany/videos/810443930634977З

☐ Հանդիպում ՀՀ Վաստակավոր արտիստուհի Բյուրեղիկ Մնեյանի հետ՝ https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0MgFu3GtoYU3YEyDubqXPvg3ci8F2p8MXJkk44UdCXyYRC8z1A92bBJfMmQRHKymul

☐ Հանդիպում Ջինիշյան հիշատակի հիմնադրամի Գավառի շահառու դպրոցների Ախ (աշակերտական խորհուրդների) անդամների՝

https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02vRN9Kex8SaKxHg7Sx5grjYxEWLgFxWIekC3VsRjzVNVG7muyKa1hdXSvTchrXbdl&id=100094690401356

☐ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների շրջանակներում, Հայկական Կարիտասի Գավառի «Փոքրիկ Իշխան» երեխաների խնամքի ցերեկային կենտրոնի և «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան որակյալ կրթության կայացմանը» ծրագրի համատեղ ջանքերով իրականացվեց Համայնքային ներառական միջոցառում՝ երեխաների իրավունքների կոնվենցիայի և ներառականության վերաբերյալ
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0xDWRPz516gnP8in6AV9WeiDB6LAY5hQkM22traDwcpv6oHvtyfbEvpmimRvp55h1l

☐ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների շրջանակներում, Գավառի «Փոքրիկ Իշխան» ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնի սաները փազլների միջոցով իրազեկվում են ՄԱԿ-ի կողմից ընդունված երեխաների իրավունքների մասին կոնվենցիային:
https://www.facebook.com/ArmenianCaritas/videos/222290528135142

☐ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների շրջանակներում, Գավառի «Փոքրիկ Իշխան» ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնի սաների համար իրականացվող երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացմանը ուղղված տարաբնույթ իրազեկիչ տեղեկատվական հանդիպումներ, ակցիաներ և քննարկումներ
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0JMWbxjroScECH37r87aj9caH9Ng7dKRdqpeyQbhrLJs4jQMTRWiYsFwxMig47vYHl

☐ Պարի խմբակի վերաբերյալ լուսաբանումները հասանելի են հետևյալ հղումով՝
https://www.facebook.com/profile.php?id=100067378295375

☐ Ամանորյա միջոցառում
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02QA1c9aQ7lepgN574mmlTGkntVBKFuCd2EVwkqw33KIhUe526ub41rGlaHqbPwQiql

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

Կենտրոնի բազմամասնագիտական թիմը ձեռք է բերել հմտություններ դեպքերի վարման արդյունքում և դարձել է առավել ճկուն ու արագ արձագանքող:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Հաջորդ եռամսյակում շարունակվում է սոցիալ-հոգեբանական և լոգոպեդական անհատական և խմբային աշխատանքները:
Կկազմվեն պլանավորումներ թեմատիկ խմբային աշխատանքերի համար:

Համատեղ միջոցառումներ Կենտրոնում և Կենտրոնից դուրս. Ընտանիքի միջազգային օր, Բուլինգի կանխարգելման միջազգային օր, Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր, Այցեր մշակութային կենտրոններ և այլ կառույցներ:
Դրական ծնողավարման և աշխատանք փնտրելու հմտությունների դասընթացներ ծնողների հետ: Ինքնաջակցման խմբեր ծնողների հետ:
«Հասակակիցները հասակակիցների համար սոցիալ կրթական ճամբար» եմ ՍՁ ծրագիր, փափուկ հմտությունների և բնապահպանական դասընթացներ և պրակտիկ աշխատանքներ երեխաների հետ:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

- **Դասընթաց երեխաների համար <<Ներառումը սկսվում է ինձանից>> թեմայով:** Ս/թ մարտի 11-16 կենտրոնի սոցիալական աշխատողները և հոգեբանը իրականացրել են խմբային հանդիպում թվով **70** շահառու երեխաների հետ որից՝ տղա 33, աղջիկ 37:

Հայկական Կարիտասի <<Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան որակյալ կրթության կայացմանը>> ծրագրի շրջանակներում սույն թեմատիկ դասընթացին մասնակցել էին նաև կենտրոնի մասնագիտական թիմի անդամները և թեման ներկայացրել են կենտրոնի սաներին:

- **Բնապահպանական արշավ:** Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի կողմից իրականացվող §Թուղթը Աղբ չէ¦ բնապահպանական արշավի շրջանակներում կենտրոնի սաների և անձնակազմի կողմից հավաքված թղթե թափոնները հանձնվել են վերամշակող ընկերության, որի հասույթով ձեռք բերված գումարով կենտրոնի համար ձեռք է բերվել անհրաժեշտ պարագա և կահավորվել է կենտրոնի բակային տարածքը:
- Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **2 շաբաթօրյակ** կենտրոնի բակում: **1-ին շաբաթօրյակին մասնակցել է 14 երեխա՝ 12 աղջիկ, 2 տղա, 2-րդ շաբաթօրյակին՝ 13 երեխա՝ 8 աղջիկ, 5 տղա:**
- Ս/թ հունիսի 18-ին Հայկական Կարիտասի §Արևային էներգիայի կիրառումը որպես կենսապայմանների և առողջական վիճակի բարելավման միջոց¦ ծրագրի շրջանակներում Գավառի Փ‧ Կենտրոնի **31 սաների 19 աղջիկ, 12 տղա** համար իրականցվեց գործնական դասընթաց §Շրջակա միջավայրի աղտոտվածություն, թղթի վերամշակում¦ **թեմայով:**

Հայկական Կարիտասի §Արագ Արձագանքում ԼՂ-ից բռնի տեղահանված ամենախոցելի ընտանիքներին ¦ծրագրի շրջանակներում 5 շահառու ընտանիքի տրամադրվել է սննդի և հիգենայի գնման նպատակով 80.000 արժողությամբ քարտեր:

- Օգոստոս ամսին, սոցիալական աջակցություն է տրամադրվել **81** երեխայի /37 տղա, 44 աղջիկ/: Յուրաքանչյուր երեխայի տրամադրվել է երեխայի տրամադրվել են **1 հիգենիկ պարագաների փաթեթ** և **1 գրենական պարագաների փաթեթ**:

- Հայկական Կարիտասի CoNaKa ծրագրի աջակցությամբ շրջանակում Փ‧Կ‧-ի կենտրոնի **2** տեղահանված ընտանիքի շահառու մայրերի համար իրականացվել է 3-ամսյա դասընթաց ուղղված Հաշվապահության ոլորտի զարգացմանը: Ծրագրի

շրջանակում յուրաքանչյուր շահառուի տրամադրվել է համակարգիչներ 150.000 դրամ արժողությամբ:

- Ս/թ նոյեմբերի 20-ին, Ջինիշյան հիշատակի հիմնադրամի Գավառի շահառու դպրոցների ԱԽ (աշակերտական խորհուրդների) անդամները հանդիպում ունեցան «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի Գավառի «Փոքրիկ Իշխան» սոցիալական կենտրոնի համակարգողի և սոցիալական աշխատողի հետ: Հանդիպման ընթացքում կենտրոնի համակարգողը ներկայացրեցին կենտրոնի գործունեությունն ու իրականացվող ծրագրերը: Հաջորդիվ աշակերտական խորհրդի անդամները ներկայացրեցին իրենց կողմից մշակված նախագծային գաղափարները և խորհրդատվություն ստացան կենտրոնի մասնագետների կողմից:
  Հանդիպման արդյունքում նախանշվեցին հնարավոր համագործակցության եզրեր Փոքրիկ իշխան կենտրոնի, Ջինիշյան հիշատակի հիմնադրամի, Գեղարքունիքի, Ծաղկաշենի, Գանձակի N1, Կարմիրգյուղի N1 և Ծովազարդի միջնակարգ դպրոցների միջև:
  Հանդիպմանը մասնակցեին **20 երեխաներ, որից 3 տղա, 17 աղջիկ**: Նշված 20 երեխաներից 7-ը հանդիսանում են Փոքրիկ Իշխան կենտրոնի սաներ և հանդիպումը վերջիններիս համար կրում էր տեղեկատվական, փորձի փոխանակման բնույթ:

- Ս/թ նոյեմբերի 8-ին, Հայկական Կարիտասի Գավառի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնում հյուրընկալվեց Բյուրեղիկ Մնեյանը՝ ՀՀ վաստակավոր արտիստուհի, «Նռանէ» մանկապատանեկան թատրոնի գեղարվեստական խորհրդի անդամ, Կալիֆորնիայի հայ գրողների միության պատվավոր անդամ, երգիծաբանների համահայկական միության անդամ, հայ դրամատուրգների միության անդամ, Հայաստանի մշակույթի գործիչների միության պատվավոր անդամ, Հյուսիսային Ամերիկայի գրողների միության անդամ, Գավառի Լևոն Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոնի վաստակավոր դերասանուհի:
  Տիկին Բյուրեղիկ Մնեյանը կենտրոնի երեխաներին ներկայացրեց իր ստեղծագործական ուղին, կիսվեց իր փորձով և մասնագիտական հաջողություններով: Հանդիպմանը մասնակցել է **16 երեխա, որից՝ 10 տղա, 6 աղջիկ**:

**2024թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում Հայկական Կարիտասի Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի կենտրոնում ծառայություն ստացած շահառուների ցուցակ:**

| |
|---|
| Եռամյա ժամանակահատվածում իրականացվել է միայն նախորդ ժամանակացույցով պլանավորված գործողությունները: |

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ք. Երևան, Կառավարական տուն-3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011030732<br>ՀՎՀՀ 01506515<br>Գլխավոր քարտուղար՝<br>Սամվել Մուրադյան<br><br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br><br>Կ. Տ. | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ<br>ք. Գյումրի , Հ.Սարգսյան 3-րդ նրբ., 8տ.<br>«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»ՓԲԸ «Շիրակ»մ/ճ<br>Հ/Հ 220063350387000<br>ՀՎՀՀ 05514397<br><br>Գործադիր տնօրեն՝ Գագիկ Տարասյան<br><br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br><br>Կ. Տ. |